իրենց նիւթական միջոցներով և ոմանք էլ իրենց բարոյական օգնութեամբ կիրագործեն այս խիստ ցանկալի գաղափարը, Հայաստանում ունենալու մի Հայկական կենտրոնական դրամատուն իւր բաժանմունքներով։

Բ. վ. Ա.

ԱՒԵՏԻՍ ԲԱԼԱՅԵԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԿՏԱԿԸ

Թիֆլիսաբնակ Շուշեցի Աւետիս Բալայեանը, առաջի կարգի վաճառական, 1901 թ. դեկտեմբերի 19-ին Թիֆլիսի նոտար Լ. Մղէբրեանցի մօտ կտակ է անում և որը մահից յետոյ Թիֆլիսի Շրջանային Դատարանը հաստատում է 1903 թ. մարտի 19-ին։ Այդ կտակով Աւետիս Ղուկասեանը հետևեալն է անօրինում. Ա. Ս. Էջմիածնի Մայր Աթոռին նշանակում է երեսուն հազար ռուբլի այն պայմանով, որ այդ գումարը մնայ անձեռնամխելի, իսկ $^0/_0$ $^0/_0$ներով բարձրագոյն ուսումն ստանան Էջմիածնի Ճեմարանն աւարտած հայ լուսաւորչական զաւակները, իսկ Ճեմարանի փակման դէպքում, ուսումն ստանան հայ լուսաւորչական զաւակներից նոքա, որոնք ցանկանում են իրենց նուիրել հոգևոր ծառայութեան Կովկասի, Տաճկաստանի և Պարսկաստանի սահմաններում, պայմանով որ այդ որդեգիրները հոգևոր աստիճան ընդունելով՝ գնան արտասահման սովորելու հայկական և աստուածաբանական գիտութիւններ։ Որդեգիրներ պէտք է ընդունուեն այն անձինք, որոնք պատկանում են հայ-լուսաւորչական դաւանութեան և որոնք կխոստանան ծառայել հայոց եկեղեցուն և ժողովրդին։ Իւր այս կարգադրութեան կատարումն յանձնում է ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին Հոգևոր Ճեմարանի վարչութեան հետ միասին, իսկ վերջինիս գոյութիւն չունենալու դէպքում՝ միայն Վեհափառ Կաթուղիկոսին։

Բ. Հայոց Էջմիածնի Մայր Աթոռի վանքին նշանակում է երեսուն հազար ռուբլի։ Այդ գումարը պէտք է

մնայ անձեռնմխելի, իսկ %-ով ուսումն ստանան հայ լուսաւորչական դաւանութեան պատկանող զաւակներ, բաց միայն նպատակով կատարելագործուելու գանագան դիտութիւնների մէջ։ Իւր այս կարգադրութեան գործադրութիւնը յանձնում է ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին և Էջմիածնի ճեմարանի վարչութեան, եթէ վերջինս գոյութիւն կ'ունենայ։

Գ. Տփխիսի վանքի Մ. եկեղեցու գաւթում իւր շինած թանգարանին 10,000 ռ. այն պայմանով, որ այդ դրամագլուխը մնայ անձեռնմխելի, իսկ %-ը գործադրուեն շարունակելու իւր հիմնած գրականական մրցանակ (պրեմիա) այն կանոններով՝ որ մշակել է յիշեալ թանգարանի վարչութիւնը, և հաստատել է ամենայն Հայոց Կաթուղիկոսը առանձին կոնդակով։ Մրցանակը պէտք է տրուի ամեն տարի ապրիլի 7-ին այն շինութեան մէջ, որ կառուցել է ինքը Տփխիսի վանքի եկեղեցու գաւթում։ Այն դէպքում, եթէ Տփխիսի վանքի եկեղեցու թանգարանը որ և է պատճառով կրգադարի գոյութիւն ունենալուց՝ մրցանակը տրուելու է ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսի անմիջական կարգադրութեամբ։

Դ. Նոյն թանգարանին տալիս է 5000 ռուբլի այն պայմանով, որ %-ը գործադրուեն թանգարանի վարչութեան պահպանութեան վրայ, թանգարանի փակման դէպքում դրամագլուխն անցնում է Վեհափառ Կաթուղիկոսին, իբարեհայեցողութիւն։ Ե. Թաւրիզի հայոց դպրոցներին՝ 10,000 ռուբլի, այն պայմանով, որ դրամագլուխը մնայ անձեռնմխելի, իսկ տոկոսներով ուսանեն թոշակաւորներ իւր անունով։ Զ. Ամենայն Հայոց Կաթուղիկոսին՝ 5000 ռուբլի իբարեհայեցողութիւն։ Է. Երուսաղէմի Հայոց ս. Յակոբայ վանքին՝ 5000 ռուբլի։ Ը. Տփխիսի վանքի եկեղեցու գաւթի թանգարանին՝ 6000 ռ. այն պայմանով, որ դրամագլխի %-ով ամեն տարի 3 չքաւոր հայ-լուսաւորչական աղջկայ տրուի օժիտ։ Թ. Նոյն թանգարանին՝ 4000 ռուբլի։ այն պայմանով, որ դրամագլխի %-ը ամեն տարի ապրիլի 7-ին, իւր յիշատակի համար հոգեհանգիստ կատարելուց

յետոյ, տրուեն աղքատներին։ Ինչպէս այս գումարը, նոյնպէս և Ը. կէտում յիշած 6000 ռ. Թանգարանի փակման դէպքում անցնում են Վրաստանի Հայոց կոնսիստորիային նոյն նպատակով։ Ժ. Իւր խոստովանահայր Գիւտ աւագ քահանայ Աղանեանին 6000 ռ. որպէս զի նա, իսկ նորա մահից յետոյ նորա ժառանգները, տոկոսները գործադրեն Աղանեանի երկասիրութիւնների հրատարակութեան համար։ ԺԱ. Տփխիսի վանքի Մ. եկեղեցու միաբանութեան՝ 2000 ռուբլի, այն պայմանով, որ միաբանութիւնը ստանայ ամեն տարի տոկոսները, և ամեն տարի ապրիլի 7-ին կատարէ հոգեհանգիստ իւր գերեզմանի վրայ։

Այդ բոլոր գումարները տալուց յետոյ, իւր բոլոր շարժական և անշարժ կայքից իւր կին Աննա Ղուկասեանը ստանալու է իւր օրինական մասը, իսկ այնուհետև իւր միւս բոլոր ստացուածքը կտակում է իւր աղջիկ Թամարա Աւետիսեան Ղուկասեանցին ի լիակատար սեպականութիւն։ Եթէ վերջինս կը վախճանուի առանց ամուսնանալու՝ նորան հասանելի բոլոր դրամագլուխը պէտք է գործադրուի հիմնելու և պահպանելու մի բարձրագոյն դպրոց «Ղուկասեան Հայկական ճեմարան» անունով, Տաճկահայաստանի քաղաքներից մէկում կամ որտեղ աւելի յարմար կը համարեն Ամենայն Հայոց Կաթուղիկոսը և Պոլսի Հայոց Պատրիարքը, առանձին կանոններով, որ իւր ժամանակին մշակուելու և հաստատուելու են Կաթուղիկոսի կողմից»։

Կտակի մէջ յիշատակած 30,000+30,000=60,000 ռուբլին, որ կտակուած է Էջմիածնի վանքին, կտակի մէջ յիշատակած նպատակին գործադրելու, դրուած է պետական դրամատուն Էջմիածնի Սինոդի անունով և գործադրուում է իւր նպատակին։

Վախճանուել են արդէն կտակարարի այրի կին Աննա Ղուկասեան և միակ ժառանգ դուստր Թամարա Ղուկասեան (չամուսնացած)։ Ըստ որում կտակի զօրութեամբ Ղուկասեանից մնացած ամբողջ կարողութիւնը պէտք է գործադրուեն բաց անելու Ղուկասեան ճեմարանը։

Թամարա Ղուկասեանի մահից (1911 թ.) յետոյ առաջ է գալիս վէճ Ղուկասեանի ժառանգների կողմից կտակի իրաւաբանական մի երկբայութեան պատճառով, որով ցանկանում էին ոչնչացնել կտակը, բայց 65 հազար ռուբլի տրուելով ժառանգներին՝ դատաստանական գործը վերջացնում են հաշտութեամբ և կտակը մնում է իւր զօրութեան մէջ։

Հանգուցեալ Ա. Ղուկասեանի կտակակատարներն են իւր կին Աննա Ղուկասեանը (վախճանուած), Պօղոս Յովսէփեան Ղուկասեան և աներոջ որդի Մնացական Յովհաննիսեան Խունունց։ Կտակի ճիշտ գործադրութեան և դումարների պահպանութեան ամբողջ հոգացողութիւնը կատարում էր պ. Մնացական Խունունցը, քանի որ պ. Պօղոս Ղուկասեանը մշտական ապրում է Պետերբուրգում։ Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Գէորգ Ե-րդ Կաթուղիկոսն դեռ ևս իւր Տեղապահութեան օրից 1911 թ. ամեն կերպ աշխատել է հսկել կտակի ճիշտ գործադրութեան վրայ։ Վերջին ժամանակները՝ Թամարա Ղուկասեանի մահից (1911 թ.) յետոյ դատաստանական վէճի պատճառով գործը ձգձգուեց, իսկ երբ հաշտութեամբ վերջացաւ վէճը Ղուկասեան ժառանգների հետ՝ Վեհափառն բարեհաճեց Թիֆլիսում նշանակել յատուկ յանձնաժողով ներկայ թուի ապրիլ ամսին Ա.ետիք Ղուկասեանի կտակակատարներից ժառանգութիւնը ընդունելու համար յանձինս Թիֆլիսի թեմական առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի, Սիսոդի անդամ Տ. Մատթէոս եպիսկոպոսի և երդուեալ հաւատարմատար պ. Սամսոն Յարութիւնեանի։ Կտակակատար պ. Մնացական Խունունցը կանոնաւոր հաշուապահութեամբ պահած հաշիւներն առանձին արձանագրութիւններով յանձնում է Վեհափառի ներկայացուցիչներին և Տ. Մատթէոս եպիսկոպոսն վերադառնալով ս. Էջմիածին՝ 2 մայիսի յայտարարութեամբ ներկայացնում է Ա.ետիք Ղուկասեանի ամբողջ կարողութեան մանրամասն հաշիւը իրեն յանձնուած արժէթղթերով և բանկային գրքոյկներով։ Այստեղ բերում ենք Տ. Մատթէոս եպիսկոպոսի յայտարարութեան հաշուի պատկերը պարզ

գաղափար տալու համար հայ հասարակութեան հանգուցեալի թողած կարողութեան մասին յօդուտ տպագայ Ղուկասեան ճեմարանի։

«Կատակլասար պ. Մնացական Թունունցը իւր մօտ գտնուած հաշիւները կազմել էր մինչև ներկայ տարուայ ապրիլի 15-ը՝ որի պատկերն հետևեալն է՝

	Ռ.	Կ.
1. Մի տուն Միքայէլեան պողոտայի վրայ արժողութեամբ	100000	—
2. Ազովօ-Դոնեան դրամատանը մի տարով պահ տուած № 49347 տոմսով	25000	—
» » » » № 49348	50000	—
» » » » № 49349	10000	—
3. Վոլժսկի-Կամսկի դրամատ. մի տարով պահ տուած № 94160	150000	—
4. Ընթացիկ հաշուով Տփխիսի փոխադարձ վարկի ընկերութեան դրամատանը № 100903 գրքոյկով	1866	31
Վոլժսկի-Կամսկի դրամատ. № 62253 գրքոյկով	2420	70
Տփխիսի առևտրական դրամտ. № 72112 »	2083	77
Ազովօ-Դոնեան դրամատանը № 4698536 գրքոյկով	7522	32
Ս. Պետերբուրգի Միջազգային դրամատան Բազուի ճիւղում № 1471 գրքոյկով . . .	556	23
5. Խաղարկութեան տոմսեր I փոխ. 15 հատ, հատը 470 ռ. հաշուով	7050	—
» » II » 15 » 370 .	5550	—
» » III » 13 » 270 .	3510	—
6. 5%-արեր գրաւաթղթեր Տփխիսի ազնուականաց բանկի 51 հատ իւրաք. 1000 ռ. արժողութեամբ, բայց հաշուած է իւրաքանչիւրը ընթացիկ հաշուով 900 ռ.	45900	—
14 հատ 500 ռ. արժ. ընթ. հաշուով իւրաք. 450 ռ.	6300	—
24 հատ 100 ռ. » » » » 90 ռ.	2160	—
7. Բազուի մեքենայաշինութեան ընկերութեան մի ակցիա իսկական արժողութիւնը 2500 ռ., բայց գնահատուած է	1500	—
8. 10 մուրհակներով անյոյս ստանալիքներ . .	55739	75
9. Ազովօ-Դոնեան բանկում պահ տուած 85000 ռ. %% սկսած 1913 թ. նոյեմբ. 22-ից մինչև 1914 թ. յունվ. 1-ը (որ մնում է բանկի վրայ) . .	303	93
10. Տփխիսի զատաստանական պալատի անուամբ դեպոզիտ դրուած Տփխիսի պետական գանձարանում		

№ 13732 անգոբրադրով	16385	60
11. Տփխիսի առևտրական բանկում հանգուցեալների թանկարժէք իրերը երկու արկղների №№ 18 և 322 գնահատութիւնը	2000	—
12. Կտակակատար Մ. Խունունցի մօտ առձեռն դրամ	372	01
Ընդամենն	496220	62

Ուրեմն առ 15 ապրիլի 1914 թ. կտակակատար պ. Մնացական Խունունցը պէտք է ներկայացնէր ծախքերից դուրս հանգուցեալ Աւետիք, Աննա և Թամարա Ղուկասեանների ամբողջ կարողութիւնը արժողութեամբ չորս հարիւր ինսուն և վեց հազար երկու հարիւր քսան ռուբլի 62 կ. (496220 ռ, 62 կ.), սակայն, որովհետև հաշուետուութիւնը շարունակուեց մինչև սոյն տարուայ ապրիլի 26-ը, իսկ այդ ժամանակամիջոցում բանկերում ընթացիկ գումարները Ձերդ Վեհափառութեան անուան փոխանցելիս մի քանի բանկեր վճարեցին առ 26 ապրիլի %%-ը, առևտրական տանը պահ տուած արկղի իրերը գնահատուեց ըստ ցուցակի աւելի, քան հանգուցեալներն էին գնահատել, հանգուցեալների տան կահ-կարասիքը, որ մինչև այդ չէր գնահատուած, գնահատութեան ենթարկուեց, այլ և ստացողական-յանձնողական գործողութիւնները կատարելու համար տեղի ունեցան ծախքեր կտակակատար պ. Մ. Խունունցի ձեռքով, ուստի բնականաբար 15 ապրիլի կազմած հաշիւը և դրա հետ միասին նաև 496220 ռ. 62 կ. դրամագլուխը ենթարկուեց փոփոխութեան ըստ այսմ.

1. Բանգում պահուած արկղները գնահատուած էին 2000 ռ., գնահատուեցին 3521 ռ. 03 կ. աւելի 1521 ռ. 03 կ.

2. Բանկերում ընթացիկ հաշուով դրած էր 14449 ռ. 33 կ. այժմ դրուած է 14597 ռ. 69 կ. աւելի 148 ռ. 36 կ.

3. Տան կահ-կարասիքները չէր գնահատուած այժմ գնահատուած է 5028 ռ.

Հետևաբար դրամագլուխը պիտի աւելանար այլ ևս 6697 ռ. 39 կ. բայց նոյն ժամանակամիջոցում եղել են կտակակատարի ձեռքով ծախքեր 335 ռ. 80 կ.

Ուստի առ 26 ապրիլի 1914 թ. դրամագլխի վրայ աւելացել է 6361 ռ. 59 կ. բացի այդ նաև Միջազգային

բանկում եղած 556 ռ. 23 կ. առ 26 ապրիլի %-ը 47 ռ. 38 կ., ընդամէնն 6361 ռ. 59+47 ռ. 38 կ.=6409 ռ. որն աւելացնելով առ 15 ապրիլի կազմած դրամագլխի վերայ առ 26 ապրիլի 1914 թ. կազմում է հինգ հարիւր երկու հազար վեց հարիւր քսան և ինն ռուբլի 62 կոպէկ (502629 ռուբլի 62 կոպ.)։

Այդ յիշեալ 502629 ռուբլի 62 կոպէկ դրամագլուխը կազմուած է հետևեալ գումարներից՝

	Ռ.	Կ.
1. Տան արժողութիւնը	100000	—
2. Բանկերում տարով պահ տուած գումարներ .	235000	—
3. Ընթացիկ հաշուով բանկերում դրուած . .	14597	69
4. Արժէթղթեր պահ տուած Ազովо-Դոնեան բանկում	70470	—
5. Ակցիա Բագուի մեքենայաշինութեան ընկերութ.	1500	—
6. Անյոյս մուրհակներ	55739	75
7. Տփխիսի պետական գանձարանի անդորրագիր .	16385	60
8. 85000 ռուբլու 31-ն յունուարի 1914 թ. % (ապառիկ բանկի վրայ)	303	93
9. Հանգուցեալի ոսկեղէն և արծաթեղէն իրերը .	3521	03
10. Հանգուցեալի տան կահ-կարասիքները . .	5028	—
և 11. Առ ձեռն գումար	83	62
Գումար	502629	62

Այսպիսով Ղուկասեան կտակի հաշիւների գործը միանգամայն պարզուեց, կտակակատարներն էլ իրենց բարոյական պարտքը կատարեցին։ Մնում է ցանկալ մօտիկ ապագայում տեսնել հանգուցեալ ազգային մեծ բարերար Աւետիք Ղուկասեանի բարի կամքը իրագործուած, կառուցանելով Ղուկասեան-Ճեմարան գիտութեան տաճարը։ Գործը մեծ է և երախտագիտութեան արժանի։ Այժմ աւելի քան կարևոր է Ցաճկաստանում հիմնել այդ լուսոյ տաճարը ու զարկ տալ մատաղ սերնդի լուսաւորութեան սուրբ գործին։

Բ. վ. Ա.

Հանգուցեալ դերասան Պետրոս Ադամեանի իրերը

Սինօդում 1914 թ. ապրիլի 11-ին պ. Գրիգոր Զալխուշեանի միջոցաւ Նոր-Նախիջևանից ստացուել են հան-